Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) **license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

1998

Վ. Ա Ր Թ

Ա. ԿԱՏԱՐԻՆԷ

ԵՐԱՆԵԼԻ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԷՐ ԿՈՒՍԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

Աշխատասիրեալ
Ի Տէր Պ. Հ. Յակովբջանեանց
Եւ
Վերածեալ Յաշխարհիկ բարբառ
Ի Մ. Տէր Պ. Յակովբջանեանց
(Ուսումնաւարտ Ազգ. Կեդր. Դպրոցի 1901)

Ի ՆՈՐ-ՋՈՒՂԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ Ս. ՎԱՆԱՑ
1902

235
Կ-34

235
Ч-34

ՎԱՐՔ

Ս. ԿԱՏԱՐԻՆԷ

ԵՐԱՆԵԼԻ ԵՒ ԻՄԱՍՏԱՍԷՐ ԿՈՒՍԻՆ

ԵՐԿՐՈՐԴ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ

ԱՇԽԱՏԱՍԻՐԵԱԼ
Ի ՏԷՐ Պ. Հ. ՅԱԿՈՎԲՋԱՆԵԱՆՑ
ԵՒ
ՎԵՐԱԾԵԱԼ ՅԱՇԽԱՐՀԻԿ ԲԱՐԲԱՌ
Ի Մ. ՏԷՐ Պ. ՅԱԿՈՎԲՋԱՆԵԱՆՑ

Ի Նոր—Զուղա
Ի Տպարանի Ամենափրկչեան Ս. Վանաց
1902

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

2010
2099 - 2002

Ի ՀԱՅՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ

Տ. Տ. ՄԿՐՏԻՉ Ա.

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԵՒ

ՑԱՌԱԶՆՈՐԴՈՒԹԵԱՆ

ՀԱՅՈՑ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ ԵՒ ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

Տ. ՍԱՀԱԿԱՅ

ՍՐԲԱԶԱՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ

2002

93924-ԱՀ

2099-2002

ԱԶԴ

Որովհետեւ երկար տարիներ ուսուցչութեան պաշտօն վարելով Ք. Նախկին Ս. Կատարինէ եւ Ք. Նոյն անուամբ Նորակառոյց Դպրոցներում նկատել եմ որ աշակերտուհիներից զրեթէ մեծ մասն անտեղեակ են Ս. Կատարինէ իմաստասէր եւ հանճարեղ կուսի վարքից, որոյ անուամբ կառուցուած Դպրոցում դաստիարակւում են. վասնորոյ ցանկալի եղաւ ինձ համառօտակի քաղուածքներ առնել Ք. մեր Եկեղեցական մատենից եւ Ք. ուրիշ Քրիստոսաղաւան ազգերից եւ յիշեցնել նրանց Ս. Կուսի վարքի վերաբերմամբ, որով յուսալի է Ք. մեր աշակերտուհիք պիտի սիրեն, յարգեն եւ մանաւանդ ջանան իրենք նմանեցնել Ս. Կուսին. իրենց պարկեշտ, ուսումնասէր վարքով եւ գերապանծ բարեպաշտութեամբ:

Տէր Գ. Հ. Ե.:

ԱՋԴ

—

Որովհետեւ երկար տարիներ ուսուցչութեան պաշտօն վարելով թէ նախկին Ս. Կատարինէ եւ թէ նոյն անուամբ նորակառոյց Դպրոցներում նկատել եմ որ աշակերտուհիներից գրեթէ մեծ մասն անտեղեակ են Ս. Կատարինէ իմաստասէր եւ հանճարեղ կուսի վարքից, որոյ անուամբ կառուցուած Դպրոցում դաստիարակւում են. վասնորոյ ցանկալի եղաւ ինձ համառօտակի քաղուածքներ առնել թէ մեր Եկեղեցական մատենից եւ թէ ուրիշ Քրիստոսադաւան ազգերից. եւ յիշեցնել նրանց Ս. Կուսի վարքի վերաբերմամբ, որով յուսալի է թէ մեր աշակերտուհիք. պիտի սիրեն, յարգեն եւ մանաւանդ ջանան իրենց նմանեցնել Ս. Կուսին. իրենց պարկեշտ, ուսումնասէր վարքով եւ զերապանծ բարեպաշտութեամբ:

Տէր Պ. Հ. Ց:

ՍՈՒՐԲ ԿԱՏԱՐԻՆԷ

ՍՈՒՐԲ ԿԱՏԱՐԻՆԷ

Նեքտառինէ կամ Կատարինէ իմաստասէր և հանճարեղ կոյսն՝ (որը Յունաց մէջ Էգադէռինա է կոչվում և Հռովմայեցւոց մէջ Գաթարինա) Եգիպտոսի Աղէքսանդրիա քաղաքիցն էր, մեծն Կոստանդիանոսի ազգականութիւնից Մաքսենտ և Մաքսիմինա բրոնակալ թագաւորաց ժամանակում: Նա հաւատով Քրիստոնեայ էր, գեղեցիկ տեսքով և շատ մտավարժ:

Բացի աստուածային գրոց գիտութիւններից նա սովորեց բոլոր Հելլենական գիտութիւնները, որովհետև Աղէքսանդրիայում օրէնք էր սովորեցնել այս բոլոր գիտութիւնները ոչ միայն

այլ մարդկանց, այլ նաև. մտավարժ կանանց այնտեղի բարձրագոյն ճեմարաններում։ Այսպիսի գիտութիւնների մէջ սուրբ Կատարինէն շատ յառաջադէմ գտնուեցաւ. նա սովորեց Հոմերոսի և Վիրգիլիոսի նաև Արիստոտէլի Պղատոնի, Պիւթագորասի և այլ Յոյն փիլիսոփաների գրքերը։ Նա սովորեց նաև թուաբանութիւն, երկրաչափութիւն, աստղաբաշխութիւն, երաժշտութիւն և ուրիշ այսպիսի գիտութիւններ լեզուագիտութեան արհեստն ևս զարմանալի կերպով սովորեց։ Նա երեսնից աւելի լեզուներ գիտէր և այսպէս էր խօսում, որ լսողներին ապշեցնում էր և այսպէս նա մեծ համբաւունէր բոլոր տեղերում։

Մի օր նա տեսաւ, որ Մաքսենտիոս թագաւորն իւր բոլոր բազմութեամբ գալիս է Աղէքսանդրիա և կռոց մեհեանը գնալով սկսում է զոհ մատուցանել կռքերին։ Սուրբ կոյսն ազդուելով Աստծուց՝ անվեհեր կերպով գնաց և մտաւ կռատունը թա-

գաւորի մօտ և սկսաւ իմաստուն խօսքերով խօսել և յանդիմանել թագաւորին, գարշելի կռքերին զոհ մատուցանելուն համար, նա շատ վկայութիւններ էր մէջ բերում Հելլենական իմաստութեան գրքերից և բոլորովին ատում էր կռքերին, նոյնպէս նա ուրիշ ազգերից էլ վկայութիւններ բերելով հաստատում էր որ հեթանոսական բոլոր պաշտամունքները մոտի բաներ են, այնպէս որ թագաւորն սկսաւ ապշել և զարմանալ նրա իմաստութեան և լեզուագիտութեան վերայ։ Տեսնելով երանելին որ ոչ ոք չէր վստահանում իրեն պատասխանել և որ բոլոր բազմութիւնն ապշած իրեն են նայում, այն ժամանակ նա սկսաւ պարզ, յստակ ոճով խօսել թագաւորի հետ և ասել. «ինչո՞ւ ես ժողովել այդ բոլոր բազմութիւնը և կռքերի մոլորութիւնով կորուստանում նրանց, այժմ թող այդ մոլորութիւնը և ինձ լսիր և միայն ճանաչիր նրան, որը խօսքով հաստատեց բոլոր աշխարհը, քանզի նա է

միայն ճշմարիտ Աստուածը, որն ուղարկեց իր միածին որդի Յիսուսը, մեզ իր խաչով ազատեցնելու, նա մոլորելոց փրկիչն է և յաւիտենական Աստուածը և միայն նրան կ'վայելէ յաւիտենական փառքը, ամէն»:

Թագաւորն տարակուսանաց մէջ լինելով սուրը կոյսին տարաւ իւր ապարանքը, կարծելով թէ ողորմական խօսքերով կարող է նրան քրիստոնէութիւնից դարձնել կռապաշտութեան, բայց նա Աստուածիմաստ խօսքերով ջանք էր անում հաւանեցնել թագաւորին:

Վերջինս իւրայիններին հետ խորհրդակցելով, հրամայեց կոչել յիսուն հոգի հռետոր վարդապետներ և խօսել նրա հետ, և նրա միտքն յաղթահարելով հաւանեցնել նրան հեթանոսական կրօնին:

Ժողովեցան նոյնթուով իմաստուններ, հռետորական, փիլիսոփայական գիտութեամբ պերճացած մարդիկ և երբ սկսան խօսել թագաւորի առաջ՝ սրբուհի կոյսն իմաստութեամբ օժտուած-

ներին զարմացրեց և ամաչացրեց. նրանց ներկայացրեց որպէս տգէտներ և անտեղեակ իմաստութիւնից, այնպէս որ նոքա սկսան երկնչել և ամենևին չէին վստահանում խօսել կամ մի որևէ բան հարցնել փիլիսոփայական գրքերից:

Երանելի Կատարինէ կոյսը տեսնելով նրանց վարանման մէջ սկսաւ բազմապատիկ վկայութիւններով ոչնչացնել կռքերին և միայն մի արարչի ճշմարտութիւնը ցոյց տալ և հաստատել, նա արտաքին գրքերից էլ մարգարէական մրտքեր էր արտայայտում աստուածպաշտութեան խորին խորհրդների վերաբերմամբ, ինչպէս Վիրգիլիոսի գրուածից թէ. «Երեք միութիւնից մինը տեսաւոր մարմնով՝ երեք աներևոյթներից չէ պակասում»: Նա մէջ էր բերում նաև Սիբիլլաների գրութիւններից, որոց մէջ գտնւում են ճիշտ դուշակութիւններ Փրկչի խորհրդների անօրէնութեան համար, ինչպէս. «Ո՞վ երեք անգամ երանելի փայտ, որոյ վերայ աստուածայինն է տարածւում.... քահա-

նաներն իրեանց բժիշկն փայտի վերայ խաչ կ'հանեն, և նրան չեն կարող յաղթել»:

Եւ այսպէս սուրբ կոյսն իմաստալից խօսքերով քարոզում էր նրան և փիլիսոփաներն ապշած նայում էին նրան և ոչինչ պատասխանում:

Թագաւորն տեսնելով, որ իւր իմաստուն կարծեցեալ վարդապետները յաղթահարուած և ապշած մնացել են Նեքտառինէ ս. կոյսի առաջ՝ բարկացաւ նոցա վերայ և հրամայեց այրել բոլորին: Եւ երբոր այդ յիսուն մարդկանց տանում էին այրելու տեղն, նրանցից մէկն խրատում էր միւսներին, գնալ և ընկնել ս. կոյսի ոտներն և խնդրել նրանից փրկութեան հնարք՝ առնելով իւրեանց անձերի վերայ Քրիստոսի դրոշմն:

Այն ժամանակ Նեքտառինէն ասաց նրանց՝ մի երկնչիք, այլ խնդացէք Աստուծով. երանի՜ ձեզ, որ թողիք մոլորութիւնը և ճանաչեցիք ճշմարիտ Աստծուն, այժմ ընդունեցէք մկրտութիւնը կրակով և ուրախացէք հրեշ-

տակների հետ: Եւ այդպէս նահատակուեցին այդ յիսուն հոգին. խոստովանելով իւրեանց Տէր Յիսուս Քրիստոսին և մինչևանգամ նրանցից մի մազ չայրուեց: Այն ժամանակ ներկայ գտնուող ամբոխից շատերը հաւատացին Քրիստոսին: Իսկ բռնաւոր թագաւորն հրամայեց ս. Կատարինէին ծեծելով տանջել, վանորոյ հանեցին նրանից ծիրանին և բեհեզն և բոլոր ոսկեայ զարդերն և միայն շապիկը թողին, և սկսան ծեծել նրան խարազանով ուժգնապէս և ձգեցին նրան բանտի մէջ մինչև որ նորանոր տանջանքներ հնարեն նրա համար: Մի այրի կին, որ երբեմն Մագնենտիոս թագաւորի թագուհի էր եղած, ցանկացաւ տեսնել Նեքտառինեային և նրանից լսել իմաստութեան խօսքեր, վանորոյ Պորփիւրոս ստրատելատն տարաւ նրան գիշերով կոյսի մօտ և նրա վարդապետութեամբն հաւատաց Քրիստոսին դարձաւ իւր տունն և հաւատացեալներից մկրտուեց: Սրանից ետոյ մի անգամ էլ տարան ս. կոյսին

ատեան, և նա անխախտ հաւատով խոստովանում էր և քարոզում էր Քրիստոս Աստուածը՝ լի իմաստութեամբ և սուրբ Հոգւով. վանորոյ թագաւորն իւր իշխանների խորհրդով հրամայեց կանգնացնել կոյսին մի մեքենաւոր և սրալից անուշ վերայ. պրտրտեցնել անիւն և խորտակել նրա մարմինը. բայց սրբուհին իւր սրտով կոչելով հրեշտակներին օգնութեան, Տիրոջ հրեշտակն իջնելով փրկեց նրան այդ դժնդակ մեքենայից: Այն ժամանակ Մանգնենտիոսի նախկին թագուհին, որը գիշերով գնալով բանտ ս. Կատարինէի ձեռքով Քրիստոնեայ էր եղած՝ հերարձակ գնալով թագաւորի մօտ սկսաւ նախատել նրան և արհամարհել իւր այդ անողորմ և անագորոյն գործողութեան համար, և ինքն համարձակօրէն խոստովանեցաւ իւր Քրիստոնէութիւնն. վասն որոյ յարձակուելով նրա վերայ գլխատեցին նրան: Եւ այսպէս բարի խոստովանութեամբ նահատակուեցաւ նա:

Բռնակալ թագաւորը տեսնելով որ ոչ մի կերպով չէ կարողանում ս. Կատարինէ կուսին դարձնել իւր մոլորութեանը, հրամայեց գլխատել նրան: Եւ երբոր տանում էին նրան գլխատման տեղը, նրա ետևից մեծ բազմութիւն էր գնում և հասնելով այնտեղ՝ աղաչեց դահիճներին թողնել նրան մինչև աղօթէ, և բարձրացնելով իւր աչքերը դէպի երկինք ասաց՝ Ով Տէր Աստուած իմ քո ազատնոյ ձայնը և շնորհիր ինձ իմ խնդրուածները, և տուր բոլորին, որոնք յիշում են քո անունը, քո առատ ողորմութիւնը, և բժշկութիւն բոլոր ցաւերին, և որոնք որ յիշում են ոգեւորքի օրում, ուղարկիր քաղցր հրեշտակդ, որ խաղաղութեամբ աւանդի նրանց հոգիներն, և իմ հոգիս առ խաղաղութեամբ, որովհետև քոնն են յաւիտենական փառքը. ամէն:

Այն ժամանակ ձայն եղաւ երկնքից, որ ասում էր. եկ հանգիր Սրբերի հետ, ուր հրեշտակները ապասում են քեզ, և կ'կատարեմ քո խնդրուածքը, և կամ

բոլորին իրենց խնդրուածքը, որոնք կրկատարեն քո հանգստեան օրը։ Եւ յետ Աստուածային ձայնին գլխատեցին երանելւոյն. Նոյեմբերի 25ին, 307 թ. Քրիստոսի. հրեշտակները վերցնելով նրա մարմինը տարան դրին Սինայ լերան վերայ, որ յետոյ գտնուեցաւ նրա նշխարները։

Այս հրաշալի կոյսը համարուած է պաշտոպան գիտութեանց, դպրութեանց և դպրոցաց որոյ սուրբ և պարկեշտ հովանաւորութեան ներքոյ կառուցուած է Նոր-Ջուղայի Ս. Կատարինեայ Վանք և Օրիորդական Դպրոցն։ Աղօթենք և սպասենք, որ Ս. Կատարինէի շաւիղներով ընթանալու տրամադիր օրիորդներ ելնեն նոյն անուն Հաստատութիւնից։

ՍԿԶԲՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ՕՐԻՈՐԴԱՑ ԴՊՐԱՆՈՑԻՆ Ի ՆՈՐ—ՋՈՒՂԱ

Թադէոս Արքեպիսկոպոսի անունը կապուած է Նոր—Ջուղայի Օրիորդաց դպրոցի սկզբնաւորութեան հետ, ուստի արժան է այստեղ միջանկեալ յայտնել, որ Հանգուցեալ մեծահոգի և հայրենեաց պաշտպան Ներսէս Ե. Կաթուղիկոսի ձեռնասուն է եղել և նորա յատկութեանց տէր յայտնի չափով։

1851 թուին գալով այստեղ որպէս Հոգևոր հովիւ. գտել է Ջուղան շատ աննախանձելի վիճակի մէջ և Ս. Ամենափրկչեան վանքն ևս նեղութեան մէջ, նա որպէս անվեհեր առիւծ ձեռնամուխ է լինում գործերի մէջ չը խնայելով իւր բոլոր ջանքերն ի շինութիւն ազգի և Եկեղեցւոյ, նա անմոռանալի անուն է թողնում Նոր—Ջուղայում որպէս արթուն հովիւ կառավարելով իւր հօտը այնպէս, որ մինչև անգամ օտարները պատկառում են եղել նրանից։ 1858 թուին, Սորա Առաջնորդութեան ժամանակ, զգացուեցաւ Նոր—Ջուղայում Օրիորդական Դպրոց ունենալու մեծ կարևորութիւնը և անհրաժեշտութիւնը։ Թադէոս Արք Եպիսկոպոսը սկսեց միջոցներ որոնել, հիմնելու մի Օրիորդական Դպրոց, նա լսելով որ Ջաւայում գտնուում է մի բարեպաշտ և հայրենասէր հայ վաճառական Մանուկ անուամբ ընիկ՝ Նոր—Ջուղայեցի, որն արդէն միա-

ժամանակ յղացած էր իւր մտքում Օրիորդաց դպրոց հիմնելու անհրաժեշտութիւնը Զուղայում, իւր ծննդավայրում. պատեհութիւնից օգտուելով Թադէոս Արքեպիսկոպոսը ուղղեց նամակներ սպ. Մանուկ Յորդանանեանին, 1) որը իսկոյն և եթ սիրայօժար կամօք ընդունեց նրա առաջարկութիւնը և հիմնեց Ս. Կատարինեան Օրիորդաց դպրոցը, Զուղայում գտնուող նոյն անուամբ Մենաստանի ծոցում, որը կարելի է համարել իբրև առաջին Օրիորդական Դպրոց Պարսկաստանում և կարելի է ասել նոյն իսկ ամբողջ Հայոց մէջ։

Այսպէս սկսուեց տարածուել Նոր—Զուղայեցի Օրիորդաց մէջ փոքր ի շատէ կրթութիւն որով և սկիզբ դրուեց դաստիարակութեան սրբազան գործին մայրերի ձեռքով։ Բայց 20 երորդ դարու սկզբին դաստիարակութեան պահանջներն, որ փոխուած և բարդուած էին, պահանջում էին իրենց որոշ յարմարութիւններ ինչպէս բարոյական նոյնպէս և նիւթականն ևս կրկին տեսակէտից.

Այսպէս երբեմն մի քանի անյարմար սենեակների մէջ տեղաւորուող 30—40 աշակերտուհիների

1) Յիշեալ բարեպաշտ Հայրենասէրը նուիրեց նաև մի պատուական մասուլ մեր Ամենափրկչեան Ս. Վանաց, որ գործ է ածվում մինչև ցայժմ։ Նաև ապահոված է Զաւայի մայրաքաղաք Բատաւիայի Տէրութեան դրամատանը որոշ գումարներ է նպաստ Օրիորդաց Ուսումնարանին և Հոգևոր Դպրանոցի տեղւոյս իսկ 1879 թուի Փետրվար 24 ին կնքեց իւր արդիւնաւոր կեանքը, որոյ յիշատակն օրհնութեամբ եղիցի . . .։

պահանջները շատ տարբեր էին 150—200 աշակերտուհիների պահանջներից, պահանջներ՝ որք միշտ կարիքներ են ստեղծում և կարիքներ որք բաւականութիւն են պահանջում, այս բնական ընթացքով հին դպրոցը փոխարկեցին մի հոյակապ դպրոցական շինութեան, այժմեան պահանջների համապատասխան 1899 թուականին։

Շինութեան նախաձեռնողներն եղան ժամանակի Առաջնորդն ու Հոգաբարձուքը որոնց ջանքերը պսակուեցին առանց դժուարութեանց և որն պահում է իւր վերայ Ս. Կատարինէի անունը որպէս պաշտպան կրթութեան և դաստիարակութեան. ուրեմն մաղթենք, որ նոյն հաստատութեան վերայ հսկէ գիտնական Ս. Կոյսի ոգին որով կարենայ իւր իսկական նպատակին ծառայել, որի հովանաւորութեան ներքոյ կրթութեան ու դաստիարակութեան գործ ուղիղ և անշեղ ընթանայ՝ այս իսկ նպատակով ցանկալի թուեցաւ աշխարհիկ բարբառով հրատարակել Ս. Կոյսի վարքը։

Հոգիդ անեղ՝ Սուրբ Աստուած,
Ակրն լուսոյ՝ եւ շնորհաց.
Քեզ պաղատիմք, լուր ձայնից՝
Եւ աղօթից՝ աղախնեայցս :

Շնորհեա իմաստ՝ եւ ճանաչեր,
Օրիորդացս՝ ապիկար,

ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ

Ցառաջ ճեմել՝ ի յուսմունս,
Եւ ի նոսին՝ զարգանալ :

Շնորհազարդեմ՝ զմեր հոգիս,
Քեզ ճանաչել՝ եւ սիրել,
Միշտ երկիւղիւ՝ սրբութեամբ՝
Զսուրբ հրամանսդ՝ կատարել :

Պահեմ Դու Տէր՝ զայս Դպրոց,
Միշտ հաստատուն՝ եւ պայծառ,
Տալ մեզ զուսումն, կրթութիւն,
Զքաջ գիտութիւն՝ առ Աստուած :

Այլ եւ օրհնեմ՝ Բարերար,
Զմեր Դպրոցիս՝ զՀիմնադիրն,
Զերախտաւորս, զՈւսուցիչս,
Եւ զբազմերախտ՝ մեր Մնողս :

Տէր Պ. Հ. Ց :

Լ. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

1998

<< Ազգային գրադարան
NL0028900

2009-2002

1946